ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4
«ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-17/7» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 30 օգոստոսի 2017թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Վ.Մելքոնյան
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝	Կ.Քարտաշյան,Ա.Կիրակոսյան
Հանձնաժողովի բացող անդամներ՝	Լ.Առաքելյան, Լ.Մարկոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Կ.Աբգարյան

ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-17/7 ծածկագրով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային եղանակով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը շտկելու փաստաթղթերը ուսումնասիրեց և **որոշեց՝**

1. «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-17/7» ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն հրավերի տեխնիկական բնութագրի պահանջների հետ, մասնավորապես 6.1 հավելվածով տեխնիկական բնութագիր մասում, ապրանքի փաթեթավորման մասով առաջարկվել է «փաթեթավորումը մինչև 1 լիտրանոց ապակյա 22երում, պոլիէթիլենտերեֆտալատային տարայում, պոլիպրոպիլենային տարայում, պոլիմերային տարայում, որոնց վրա պարտադիր նշված է զտաքաշը և պահպանման ժամկետը» մինչ դեռ հրավերով պահանջվող ապրանքի փաթեթավորման տեխնիկական բնութագրի համաձայն՝ «փաթեթավորումը մինչև 1 լիտրանոց Տետրա պակ տուփերով որոնց վրա պարտադիր նշված է զտաքաշը և պահպանման ժամկետը»: 28.08.2017 թվականին կասեցվել է գնման գործընթացը մեկ օրով և «Խոնդատ» ՍՊԸ-ին առաջարկվել էր մեկ աշխատանքային օրվա ընթացքում, մինչև 29.08.2017 թվականը շտկել անհամապատասխանությունը: Վերջինս 30.08.2017թ.-ին ժամը 0:05-ին՝ ժամկետի խաղտմամբ, էլեկտրոնային եղանակով ուղարկել է փաստաթղթեր: էլեկտրոնային եղանակով, որպես անհամապատասխանության շտկում ներկայացրել է փաստաթղթեր՝ մասնավորապես կնքվելիք պայմանագրի նախագծի Հավելված 1 և Հավելված 2: Այսպիսով **«ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-17/7»** ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը **համարել չշտկված**:
2. «**ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-17/7**» ծածկագրով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային եղանակով գնում կատարելու ընթացակարգի գնահատման արդյունքում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը մերժել: Հաջորդաբար թիվ 1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած Մասնակից ճանաչել **«Արարատ» Սննդի Կոմբինատ ՍՊԸ-ին**:

3. Ծանուցում ուղարկել առաջին տեղը զբաղեցրած Մասնակից **«Արարատ» Սննդի Կոմբինատ ՍՊԸ-ին**՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում (Հավելված 8) առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ **«Արարատ» Սննդի Կոմբինատ ՍՊԸ-ի**, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.
Նախագահ՝ ---------- Վ.Մելքոնյան

Քարտուղար՝ ---------- Կ.Աբգարյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Կ.Քարտաշյան

2. ---------- Ա.Կիրակոսյան

Բացող անդամներ՝

1. ---------- Լ.Առաքելյան

2. ---------- Լ.Մարկոսյան